հոգի, իսկ ընդհանուր գաղթականութեան թուի մասին՝ ինչպէս վերեւում տեսանք, ասում է թէ "տարագրեալ ժողովրդի բանակի լայնութիւնն էր Գառնու լեռների ստորոտից մինչեւ Երասխ գետի եզերը, իսկ երկարութիւնն, մի օրւայ ճանապարհ, իսկ ուրիշների գրելով 5 օրւայ ճանապարհ"։

Շարդէն եւս ոչինչ չէ խօսում գաղթականների թուի մասին, չէ յայտնում ոչինչ եւ այդ մեծ գաղթականութեան ականատես վկայ Անտոն եպիսկոպոս Գօվէան, որ մանրամասն նկարագրում է գաղթականների կրած ծանր աղէտները։ Տեղեկութիւն ունենք միայն Հինջուղայի բնակիչների թուի մասին, որ Շարդէնի ասելով, 4000, իսկ Շոպէնի ասելով 8000 տուն էր։ Եւրոպական յետագայ պատմագիրները, օրինակ՝ Կ. Բիտտէր՝ ընդհանրապէս 24.000 ընտանիք են հաշւում Հայաստանից Պարսկաստան գաղթեցրած Հայերի թիւն։ Եթէ ամէն մի ընտանիք միջին թուով 10 հոգուց բաղկացած հաշուենք, այն ժամանակ կ'ունենանք 240—250 հազար հոգի։ Բայց, տարակոյս չկայ, որ գաղթականների թիւն աւելի մեծ էր, ի նկատի ունենալով այն ահագին տարածութիւնը, որտեղից քշուեցին Հայերը։ Այս օրերս հրատարակուած մի նոր եւ նշանաւոր աշխատութիւն, որի հեղինակն է Կ. Եղեան, յայտնում է, թէ 60 հազար ընտանիք գաղթեցրեց Շահաբբասը, բայց այդ 60 հազարից միայն 20 հազար ընտանիք հասան Պարսկաստան, մնացածը ոչնչա-